ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԻՍՐԱԵԼ ՉԱՐՆԻ (*«Հայոց ցեղասպանության իրավական հիշողությունը և ցեղասպանության պատմականությունը բացառում են քաղաքական հաշվենկատությունն ու նպատակահարմարությունը»*).

Հրեա ցեղասպանագետ, պրոֆեսոր, Երուսաղեմի՝ Հոլոքոստի և ցեղասպանության ինստիտուտի տնօրեն, «Ցեղասպանության հանրագիտարանի» (Իսրայել) գլխավոր խմբագիր: Միջազգային գիտական շրջանակներում հայտնի է մի կողմից՝ որպես ամենաբարձր գիտական համարում ունեցող ցեղասպանագետ, մյուս կողմից՝ որպես իր անաչառ նկարագիրն ունեցող գիտնական, որն իր քաղաքացիական պարտքն է համարում ամենաակտիվ կերպով աջակցել յուրաքանչյուր ցեղասպանության, մասնավորապես՝ Հայոց ցեղասպանության դատապարտմանը:

Այս ուղղությամբ՝ տարբեր միջազգային գիտաժողովներին, հանդիպումներին նրա զեկուցումները, հրապարակային ելույթները, հայտարարությունները նրան դասում են այն օտարազգի ցեղասպանագետների շարքին, որոնց սկզբունքային, անկաշառ գիտական և քաղաքացիական դիրքորոշումն ըստ ամենայնի նպաստում է Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանն ու դատապարտմանը:

ՎԱՀԱԳՆ ՏԱՏՐՅԱՆ (*«Reply to Guenter Lewy»*).

Ամերիկահայ ցեղասպանագետ, սոցիոլոգիայի դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ գիտությունների ակադեմիայի արտասահմանյան անդամ:

Դասախոսել է ԱՄՆ, Եվրոպայի և Հարավային Ամերիկայի մի շարք համալսարաններում: Իր ակադեմիական բեղուն գործունեությունը նվիրվել է հայկական ցեղասպանության պատմագիտական ուսումնասիրության հույժ կարևոր գործին:

Հեղինակ է տարբեր լեզուներով հրատարակված՝ Հայոց ցեղասպանության հիմնախնդիրներին նվիրված բազմաթիվ հրատարակությունների, պատմագիտական, իրավաբանական խնդիրներին նվիրված ավելի քան 60 ակադեմիական հոդվածների:

Հանդես է եկել ցեղասպանության խնդիրներին նվիրված բազմաթիվ միջազգային գիտաժողովներին, բանավեճերին, հանդիպումներին:

2006թ. ծննդյան 80-ամյակի առիթով արժանացել է ՀՀ Գ ազգային ակադեմիայի ոսկե մեծ մեդալի:

ԳԵՎՈՐԳ ՊՈՂՈՍՅԱՆ (*«Armenian-Turkish Relations and Mutual Perceptions (Sociological Survey)»*).

Սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի տնօրեն, Հայկական սոցիոլոգիական ընկերակցության հիմնադիր-նախագահ:

Մի քանի միջազգային կազմակերպությունների և ակադեմիաների, ինչպես նաև Մոսկվայում լույս ընծայվող երկու խոշոր գիտական ամսագրերի խմբագրական կոլեգիայի անդամ է:

Հեղինակ է 10 հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով, ինչպես Հայաստանում, այնպես էլ արտասահմանում տպագրված մենագրությունների և ավելի քան 100 գիտական աշխատասիրությունների:

Գիտական զեկույցներով հանդես է եկել խոշոր միջազգային կոնգրեսներում, գիտաժողովներում: Մասնակցում է մի շարք միջազգային գիտական ծրագրերում:

ԹԵՍԱ ՀՈՖՄԱՆ (*«The Resolution "Remembrance and Commemoration of the Expulsions and Massacres of the Armenians 1915 – Germany must make a Contribution to the Reconciliation of Turks and Armenians". Issued by the German Parliament on June 16. 2005. A Critical Assessment»*).

Բեռլինի Ազատ համալսարանի Արևելյան Եվրոպայի ինստիտուտի գիտաշխատող, Հայոց ցեղասպանությանը նվիրված մի շարք հրապարակումների հեղինակ, միջազգային գիտաժողովների մասնակից:

1979-ից «Սպառնալիքի տակ գտնվող ժողովուրդների պաշտպանության ընկերություն» միջազգային իրավապաշտպան կազմակերպության նախագահության անդամ է: 1985-ին Բեռլինում հիմնել է Հայաստանի լրատվության և փաստագրության կենտրոնը:

ՄՀԵՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ (*«Հայոց Մեծ եղեռնի պատմագրությունը և մատենագիտությունը հետխորհրդային ժամանակաշրջանում»*).

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հայոց պատմության ամբիոնի վարիչ:

Հիմնական աշխատությունները վերաբերում են հայ ազգային-ազատագրական շարժման, հասարակական-քաղաքական մտքի, Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հիմնահարցերի լուսաբանմանը:

Այդ թեմաներով հեղինակ է բազմաթիվ հոդվածների և գիտական աշխատությունների, մասնավորապես՝ «1915-1916թթ. Հայոց ցեղասպանության հարցերը հայ պատմագրության մեջ» (Երևան, 1998), «19-րդ դարի II կեսի հայ ազգային-ազատագրական շարժման պատմագրությունից» (Երևան, 1987), «Հայոց Մեծ եղեռնը պատմագրության մեջ» (Երևան, 1993) աշխատասիրությունների:

ԱՐԱՄԱՅԻՍ ԲԱԼՈՅԱՆ (*«Թուրքիայի մուտքն Առաջին համաշխարհային պատերազմ. դրդապատճառներն ու նպատակները»*).

Պատմաբան, Մատենադարանի գիտաշխատող:

Գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է Հայոց ցեղասպանության խնդրում օտար տերությունների (մասնավորապես՝ Իտալիայի) դիրքորոշման հարցերը:

Թեկնածուական ատենախոսության թեման է «Հայկական հարցը և իտալական դիվանագիտությունը 1913-1923թթ.»:

Խնդրո առարկա հարցերի շուրջ հանդես է եկել գիտական տարբեր գիտաժողովներում:

ՌՈՒԲԵՆ ՍԱՀԱԿՅԱՆ (*«Մուշ քաղաքի հայկական թաղամասերի ինքնապաշտպանությունը 1915 թվականին»*).

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու:

Գիտական հետաքրքրությունների շրջանակը ներառնում է Արևմտյան Հայաստանին, մասնավորապես՝ Հայոց ցեղասպանությանն առնչվող խնդիրները:

Դոկտորական ատենախոսության թեման է «Արևմտահայությունը 1914-1917թթ.»:

Խնդրո առարկա թեմաների շրջանակներում հրատարակել է բազմաթիվ հոդվածներ և մենագրություն («Արևմտահայության ցեղասպանությունը և ինքնապաշտպանական կռիվները 1915 թվականին»):

Զեկուցումներով հանդես է եկել մի շարք գիտաժողովներում:

ՄԱՐԻԱՄ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ (*«Ողբախնամ գործի սկզբնավորումն Արևելյան Հայաստանում և Անդրկովկասում (1915-1917թթ.)»*).

ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի ասպիրանտ:

Գիտական հետազոտությունների շրջանակն ընդգրկում է Հայաստանի Հանրապետության տարիներին (1918-20թթ.) ցեղասպանության հետևանքով որբացած երեխաների խնամքով զբաղվող հայ և օտար կազմակերպությունների, ընկերությունների գործունեությանն առնչվող հարցերը:

Թեկնածուական ատենախոսության թեման է «Ցեղասպանությունից որբ մնացած հայ երեխաների խնամքը Հայաստանի Հանրապետության տարիներին (1918-1920թթ.)»:

ԱՐՍԵՆ ԱՎԱԳՅԱՆ *(«Տիրան Քելեքյանը և օսմանյան ազգայնականությունը»).*

Պատմական գիտությունների դոկտոր, ԵՊՀ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի դոցենտ, ՀՀ ԱԳՆ խորհրդական:

Ուսումնասիրության ոլորտն ընդգրկում է 19-րդ դարի վերջի, 20-րդ դարի սկզբի Թուրքիայի պատմությունը, հայ քաղաքական կուսակցությունների և երիտթուրքերի փոխհարաբերությունների պատմությունը, Օսմանյան կայսրությունում և Թուրքիայում չերքեզական գործոնը:

Գիտական աշխատությունները հրատարակվել են Հայաստանում, Ռուսաստանում, Թուրքիայում: Հեղինակ է երեք մենագրության՝ ("Черкесский фактор в Османской империи и Турции (вторая половина XIX - первая четверть XX вв.)" Ереван, 2001г.; "Геноцид 1915г. Механизмы принятия и исполнения решений" Ереван, 1999г.; "Генезис кавказского фактора" Москва, 1998г.):

ԳՈՀԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ (*«Quid»-ը մեղադրվում է Հայոց ցեղասպանության իր ներկայացման համար*).

ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության բանգարան-ինստիտուտի ավագ գիտաշխատող, բանգարան-ինստիտուտի ասպիրանտ:

Գիտական ուսումնասիրությունների շրջանակը՝ 1965թ. մինչև մեր օրերը Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման գործընթացը եվրոպական հանրության կողմից:

Թեկնածուական թեզի թեման է «Եվրոպական հանրությունը ճանաչում և դատապարտում է Հայոց ցեղասպանությունը (1965-2006)»: